

մօտ գեղեցկութիւնը կերպարանք, ձեւ ըլլալէ առաջ՝ ներքին զգայութիւն մըն է, բնախօսական ու ատով անվերածելի: Լեռներու պտուղները առոյգ են ու առողջ ու անոնց համը, ջերմ, թոյլ, յամեցուն, ծաւալուն բանէն, որ դաշտերուն գիրութենէն կ'առնէ իր հեշտութիւնն ու յորդութիւնը: Նոյն այդ գեղեցկութիւնը, այս դարու ըսկիզբին, ատեն չէր գտած դաշտայնանալու, քանի որ այդ գիւղերը կը պահէին իրենց tellurique համերը, զարկերը: Թուրքերէ ճնշուած ժողովուրդներու մէջ գեղեցկութիւնը դժբախտութիւն մըն է, իրական ցաւ մը, ամէն մարդ գիտէ ինչու, բայց քիչեր գիտեն, թէ նոյնիսկ թուրքին հասողութենէն ազատ ցեղերու մէջ, միշտ այդ երկրի երեսին, գեղեցկութիւնը դարձեալ տրտմութիւն է...: Մինչ Մաթիկ Մելիքիսանեանց իր «Կովկասը» կ'ոգեկոչէր, ես կը մտածէի մեր ճակատագրին, մեր աղջիկներուն, հոն՝ Արարատի ոտքին ու բարձր ուրիշ լեռներու թափերուն, ուր կը պատին, առանց ահի այդ լեռներուն աղջիկները, որոնց երեսին անաղարտ ինչպէս վառը կը վառի արիւնը, ինչպէս հոգին ձիւնին մէջ շրջուած վարդի մը, բարակ, իմաստուն, ինքնիրեն բաւող: Ո՛ր մեր պատմութիւնը: Քեզի չտրուեցաւ բարիքը նայելու նման աղջիկներու հաւելէն, վասնզի ստոյգ էր պատուհասումը այդ սրբապղծութիւնը ընել յանդգնողին: Շատ, չա՛տ էին իշխանուհիները, որոնց անցքին պարտաւոր էիր աչքերդ խոնարհել գետին, այլապէս սեւամորթ ներքինիներու մտրակները կը ճգմէին անխորհուրդ նայուածքիդ հետ, քիթդ ու բերանդ: Քանի՛-քանի՛ պատանիներ վրայ տրւած են իրենց աչքին պտուղները: «Կովկասից», ուր գինի խմելու համար մարդ պիտի չվախնար բանտ առաջնորդուելէ, հայհոյուելէ, նախատուելէ ու ընդդիմութեան մը պահուն ալ չէնք-չնորհք ջարդուփշուր իյնալէ: Ուր երգելը մեղք էր, մահացու տեսակէն, քեզ ընող տունէդ, տեղէդ, զաւկըներէդ ու քչող աքսոր՝ դէպի Ափրիկէ, արեւէն մարուելու ա՛լ անվերադարձ: Անծանօթ չէի Սիպերիային, բայց ունէի բաւական հասունութիւն բառը